

Կ Ո Ջ

մինչև ցարդ կենդանի՝ մասնաւորապէս գիւղերուն մէջ : Ատոնք մեր գրական աշխարհաբարին տեղը չպիտի բռնեն երբեք : Կրնայ ըլլալ միայն որ երբեմն բացառապէս յայտնուին « տեղական զրոզներ » որոնք Վանայ կամ Մշոյ բարբառով գրուածքներ ուզեն յորինել . ատոր կարելի չէ հակառակիլ . բայց այդպիսի գրուածքները միայն տեղական նշանակութիւն կ'ունենան : Աւելն անգամ որ գաւառացի Հայը պիտի ուզէ արտադրել զորք մը ամբողջ արեւմտեան Հայութեան համար . անկիս պէտք է որ գործածէ արեւմտեան գրական աշխարհաբարը :

4 ապրիլ, 1911 **ԱՐԵՎԱ 20ԳՆԵԱՆ**

Պ. Կ. ՓՐՈՓՅԻ-ԳԱԼՊԱՅԵԱՆԻ ՆՈՒԱԳԱՀԱՆԳԻՒԸ

Ապրիլ 4ի իրիկունը, Scola Cantorumի սրահին մէջ, ընդ բարձր հովանաւորութեամբ Վէնսան ալէնտիի, տեղի ունեցաւ նուագահանդէս մը զոր կազմակերպած էր Պ. Փրօֆֆ-Գալֆայեանն եւ որուն յայտագիրը ամբողջապէս նուիրուած էր իր երաժշտական հեղինակութիւններուն, (միներգներ, խմբերգներ եւ երգեհոնի համար կտորներ) : Մեներգները երգեցին Պ. Շահ-Մուրտեան, Օր. Սիւզան Կրավոյէ եւ Պ. Միհրանեան, իսկ խմբերգները երգուեցան Սքօլա Քանթորմի երգիչներուն կողմէն : Յայտագրի Բ. մասը կը կազմուէր Պ. Փրօֆֆ-Գալֆայեանի հեղինակած հայկական պատարագի մը մէջ քանի կտորներէն :

Պ. Փրօֆֆ-Գալֆայեանի այս հեղինակութիւնները, որ այդ նուագահանդէսին մէջ առաջին անգամ կ'երգուէին, յայտնութիւնը ընդին ինքնատիպ սիրուն տաղանդի մը, եւ իրենց պարունակած անձնական հրապոյրովը մեծապէս հաճելի եղան ներկայ գտնուող հայ, թուրք եւ ֆրանսացի ունկնդիրներուն ու անոնց կողմէ ջերմ ծափահարութիւններով ողջունուեցան :



Հայոց Դրամատիկական Դիկերութեան նախաձեռնութեամբ կայացած ժողովը, որին մասնակցում էին Քիֆլիսի բոլոր հայ կրթական-բարեգործական հասաստութիւնների եւ հայ պարբերական հրատարակութիւնների ներկայացուցիչները, որոնց տօնել այս տարուայ մայիսի 7ին մեր տաղանդաւոր թատերագիր եւ վիպասան Շիրվանզադէի գրական գործունէութեան երեսնամայ յոբելանը եւ այդ նպատակով ու մասնաժողով ընտրեց, որի պատուաւոր նախագահութիւնը սիրայօժար ընդունեց Պ. Ալէքսանդր Մանթաշեանը :

Յոբելեանական մասնաժողովը՝ լիայոյս, որ բազմաբղիւն զբոլի յոբելանը ջերմ արձագանգ կը ցանի հայ հասարակութեան ընդ որ խաւերում, խնդրում է յոբելեարի տաղանդի բազմաթիւ յարգողներին՝ նպաստել այդ համազգային տօնի յաջողութեանը :

Շիրահաւորութիւններ, ուղերձներ եւ նուէրներ պէտք է ուղարկել յոբելանական մասնաժողովի նախագահ Համբարձում Մելիքեանին (Ambarzoum Melikoff 8, Rue Sololac, Tiflis, Russie. կամ մասնաժողովի գանձապահ Լեւոն Մղերբեանին, Lévan Mguebroff, notaire — 4, Rue Ganovskaïa, Tiflis.)

Մամաժողովի նախագահ՝ Զ. Միլիբեան
Փոխ-Նախագահ՝ Ց. Յովհաննիսեան
Գանձապահ՝ Լ. Մղերբեան

Անդամներ՝

- Յովհ. Արիբեան, Զ. Աղայեան, Ասրպեան, Բժեկպեան
- Ա. Քարայեան, Ա. Քարեան, Գ. Քաւիցյալեան, թժ. Ա. Զարգարեան, Յովհ. Քումանեան, Լեօ, Ա. Խոսիսեան, Գ. Յուրիսեան, Զ. Մամուլեան, Տիկիկ Վ. Մամուլեան, Ա. Միլեան, Ս. Յարութիսեան, Տիկ. Յի. Վարդաբեան, Գ. Տէր-Մարգարեան :
- Քարտուղար՝ Մ. Աւետիսեան

Le Gérant : FRÉDÉRIC MACLER.
Impr. CH. NERCÈS, — 328, Rue St-Jacques. Paris.